

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Նորահաւ ԿՊակատուր և զօրացուխ առախնեաց, վառեցար զինու ճագոյն արիարաւ ընդդէմ մահու. վարդսն խաչ նահապակ, որ վառեցեք զքեզմին, վարդագոյն արեամբդ խով պսակեցեք զեկեղեցի»:

ՇԱՐԱԿԱՆ

Այս խոսքերով է սկսում այն գեղեցիկ շարականը, որ Ներսես Շնորհալին ձոնել է Վարդանանց հիշատակին, այն եկեղեցական-ազգային տոնին, որ ամեն տարի Հայաստանյայց եկեղեցին կատարում է բարեկենդանի հինգշաբթի օրը: Համարյա 15 դար է անցել Վարդանանց մղած ճակատամարտից, բայց նա անմար ջահի նման հեռավոր անցյալի խորքից լուսավորում է մեր պատմական անցած ուղին և ջերմ հուզիչ գրագմունքներով լցնում ամեն մի Հայ թրխտոնյայի սիրտն ու հոգին:

Վերարտադրենք Վարդանանց ժամանակի Հայաստանի վիճակը՝ հասկանալու համար Վարդանանց խաղացած դերն այդ ժամանակաշրջանում և նրա թողած ահագին նշանակութունը դարիք սերունդների համար:

Չորրորդ դարի սկզբին հեթանոս Հայաստանը թրխտոնյա դարձավ, և դրանով իսկ մի մեծ անջրպետ ստեղծվեց թրխտոնյա Հայաստանի ու կրակապաշտ Պարսկաստանի միջև, այն ինչ բարեկամակա՛ն կպերբ էլ ավելի ամրապնդվեցին թրխտոնյա արեմուտքի՝ Բյուզանդիայի հետ: Ամ-

բողջ 4-րդ դարում հզոր Սասանյան Պարսկաստանը բաղձաթիվ պատերազմներ է մղում Արշակունի հայ թագավորների դեմ՝ Հայաստանը հունական բարեկամութունից հետ պահելու համար: Բայց նոր կրոնը՝ թրխտոնեական վարդապետութունը՝ այնքան խոր արմատներ էր դրել հայ ժողովրդի սրտում, այնքան էր հեղաշրջել նրա միտքն ու հոգին, ամբողջ մտածողութունը, որ երբ պատմական դաժան հանդամանքներից ստիպված նա ալիմա կանդնում էր ահեղ երկընտրանքի առաջ, թե ո՛րն է երկու չարիքներից փոքրագույնը, նա երեսը դարձնում էր դեպի արեմուտք, դեպի Բյուզանդիա, հուսալով այնտեղից օգնութուն ստանալ իր քաղաքական անկախութունը պահպանելու համար, չնայած բյուզանդական նենդափոք քաղաքականութունը միշտ հուսախարության առաջ էր կանգնեցնում նրան:

Հայ ժողովրդի քաղաքական անկախութունն ավելի է ինքնուրույն դառնում, երբ 5-րդ դարի սկզբին Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի ջնդրելով հայն իր սեփական դերն է ստեղծում ու թրխտոնեու-

Թյան հիմնական աղբյուրը՝ աստվածաշունչը, ավետարանը մայրենի լեզվով լրտամ: Մեծ է, արդարև, հայ գրի հեղինակների կատարած դերն այդ ժամանակաշրջանի և ամբողջ հետագա ժամանակների համար. իրենց բազմաթիվ աշակերտներից նրանք թարգմանիչներ են պատրաստում, որոնք զննելով այն ժամանակվա մտավոր կենտրոնները՝ Բյուզանդիոն, Աթենք, Ալեքսանդրիա, ձեռք են բերում այնտեղ ավանդվող գիտությունները, կատարելագործվում և վերադառնալով հայրենիք, իրենց մեծ ուսուցիչների ղեկավարությամբ հոսանքը բերած ասորերեն և հունարեն ձեռագրերից կրոնական, պատմական և այլ բովանդակությամբ բազմաթիվ թարգմանություններ կատարում և ինքնուրույն սեփական գրական աշխատություններ արտադրում ու հայ գրականության սկիզբը դնում:

Տարբախտաբար գրական-մտավոր գործունեության այս ոսկեդարյան շրջանում Հայաստանի քաղաքական անկախությունը ավելի ու ավելի է հեղձեղուկ դառնում: Քրիստոնյա Բյուզանդիան փոխանակ անվերապահորեն օգնելու Հայաստանին, թեկուզ իր իսկ շահերի համար, դիմանալու Սասանյան ռեժիմների դեմ, վաղուց տեղ էր դարձել Հայաստանի արևմտյան մասին, իսկ արևելյան Հայաստանն էլ 428 թ. վերջնականորեն զրկվում է իր սեփական թագավորից, վերջին Արտաշիր Արշակունուց: Երկիրն ընկնում է պարսից լծի տակ, որոնք Հայաստանն սկսում են կառավարել իրենց կողմից նշանակած մարզպաններով, բայց ղեկավորական մասի, զորքի ղեկավարությունն առաջվա պես մնում է հայ իշխանների, նախարարների ձեռքում:

Զրկվելով հայրենի քաղաքական անկախությունից, ընկնելով Պարսկաստանի և Բյուզանդիայի լծի տակ, հայ ժողովուրդն այնուամենայնիվ իր նորաստեղծ գրի, գրականության շնորհիվ շարունակում է իրրև ազգություն իր ամբողջու-

թյունը, իր միասնությունը, իր հոգևոր կույտության պահպանել և անտրտունջ ծառայել թե մեկին և թե մյուսին: Սասանյան Պարսկաստանը դեռ չէր դիպել հայ մարդու հոգու նվիրական զգացմունքներին և, ըստ Եղիշի, «աստուածապաշտություն բարձրագույն կամակորուքեամբ երևելի լինէր յաշխարհին Հայոց»: Բայց ո՞վ է տեսել, որ բռնակալն իր բռնությունները սահմանափակի: Եվ ահա ժամանակի պարսից թագավորը, Հակեբերտը, սկսում է քիչ-քիչ հայ մարդու հոգևոր աշխարհն էլ սողոսկալ, նրան այդ ազատությունից էլ զրկել:

Օգտվելով այն հանգամանքից, որ քրիստոնյա Բյուզանդիան շարունակում էր պահել Պարսկաստանի հետ կապած իր խաղաղության դաշինքը, տեսնելով այսպիսով Հայաստանն առանց դրսի օգնության անկալություն, Հակեբերտն ավելի ևս գոռոզացավ և բացարձակ կերպով սկսեց միջամտել Հայաստանի ներքին գործերին, հատկապես հայ ժողովրդի հոգուն, մտքին, սրբոսին, ներքին համոզմունքներին, զգացմունքներին: Դենշապուհ անունով մեկին ուղարկում է Հայաստան, որպեսզի բռնություններ բանեցնի և աղբյուրով հայերին ստիպի թողնել քրիստոնեությունը, որպեսզի ավելի հեշտ կարողանա քաղաքականապես իրեն ենթարկել Հայաստանը:

Դենշապուհի առաջին գործը լինում է եկեղեցիները հարկի տակ դրել, որոնք մինչև այդ ազատ էին ամեն տեսակ հարկերից, նույնպես և վանքերում ապրող վանականներին հարկի տակ է դրում և առհասարակ երկրի հարկերն անասելի չափով ծանրացնում ու այլ բռնություններ գործադրում: Կարծես թե այս բոլոր դատան միջոցները հայերի համբերությունը փորձելու համար էին կիրառվում:

Բայց քանի որ Հայտնապես եկեղեցուն դեռ չէր դիպել, ուստի ոչ ոք չընդդիմացավ նրան. նրա բոլոր կարգադրությունները ժողովուրդը ճշտությամբ կատարում էր, սպասելով համբերությամբ, թե ո՛ւր

կտանի այս բոլորը: Ըստ Եղիշեի, հարկե-
րը «ոչ ըստ արքունի արժանաւորութեանն
առնուին, այլ հինարար յաղիշտակելով,
մինչև ինքեանք իսկ մեծապէս զարմանա-
լին, թէ ուստի այս ամենայն գանձ ելա-
նէ», զի՞՞րդ չէն կայցէ աշխարհն Հայաս-
տանեայց»: Քաղաքական իշխանութիւնը
կորցնելուց հետո հայ ժողովուրդը միշտ
պատրաստ է եղել անթիվ զոհողութիւն-
ներ անել իր կրօնը, իր հոգևոր աշխարհը,
իր ներքին համոզմունքներն անաղարտ
պահպանելու համար և հանուն այս բոլոր-
ի արած զոհողութիւններով իր բռնա-
կանքին միշտ զարմացել է, որովհետև
բիրտ, կոպիտ ուժի մարմնացում ներկա-
յացնող բռնակալների համար միշտ անհաս-
կանալի էին մնում մարդու ներքին աշ-
խարհը, հոգևոր կյանքը, բարոյական վսեմ
գաղափարները, որոնցով շնն էր և միշտ
էլ շնն էր մնում Հայաստան աշխարհը:
Հայ ժողովրդի բնատուր աշխատասիրու-
թիւնը միշտ շնն էր պահում թե իրեն, թե
իր երկիրը և թե իր տերերին. Հայաստա-
նի անրաժան օտար տերերը երբեք չհաս-
կացան, չզննահատեցին մեր ժողովրդի այս
հրաշալի կողմը:

Անհագուրդ բռնակալի համար այս բո-
լորը դեռ քիչ էր: Տեսնելով, որ ժողո-
վուրդն անտրտունջ տանում է այս բոլոր
նեղութիւնները, հայ նախարարներից շա-
տերն իր ուզած ժամին իրենց գործով
միշտ ներկայանում էին իրեն՝ պատրաստ
կատարելու իր բոլոր հրամանները, Հաղ-
կերար է՛լ ավելի է առաջ գնում իր մտա-
դրութիւնների մեջ և առանձին գրութիւններ
շարադրելով իր դափնանած մազդեզանց
կրօնի, կրակապաշտութեան, մոզերի ուս-
մունքը, հայերին պարտավորեցնում է կամ
այդ գրութիւնը պատասխանել և կամ
անձամբ ներկայանալ արքունիք՝ Տիգրան
քաղաքը:

Այս գրութեան պատասխանելը շատ և
շատ դժուրին էր ժամանակի հայ հոգե-
վորականութեան համար, որի ականաւոր
ներկայացուցիչները Սահակի և Մեսրոպի

արժանավոր հաջորդներն էին: Քրիստոնե-
ութեան մուտքից 150 տարի էր անցել. Ս.
Գրիգոր Լուսաւորչի ցանած սերմերը պա-
րարտ հող էին գտել Հայաստանում. առա-
վել ևս պողարեր դարձաւ այդ հողը, երբ
գրիգի գյուտի շնորհիվ քրիստոնեական
կրօնի վսեմ սկզբունքները գրավոր կերպով
հայ լեզվով, մայրենի լեզվով մտաչելի են
դառնում ժողովրդի լայն զանգվածներին:
Գտնվելով երկու հոր հարեանների արան-
քում, հայ ժողովուրդը միշտ տրորվել,
ճմլվել է մերթ Արեւելքից, մերթ Արեւ-
մուտքից, և դարավոր, անվերջ պատե-
րազմներ մղել երկուսի դեմ էլ, միշտ փա-
փազել, տենչացել է խաղաղութեան, շի-
նարարութեան, հանգստութեան: Եվ անհա-
հայտնելում է մի նոր կրօն, որ աշխարհին
խաղաղութիւն է քարոզում, մարդկանց՝
հաշտութիւն, ըստ ավետարանի՝ «փառք
ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղա-
ղութիւն. ի մարդիկ հաճութիւն», — անհա-
այն ժամանակվա կուսպաշտ ու կրակա-
պաշտ իրականութեան մեջ միաստվածու-
թեան քարոզած խաղաղութեան, հաշտու-
թեան և սիրո գաղափարը քարոզող կրօնը
ջերմ արձագանք է գտնում հայ ժողովրդի
սրտում: Ի դեմս քրիստոնեութեան՝ այդ
չրջանի պայմաններում նա գտնում է իր
դարավոր իղձերի կատարումը, և նա փախ-
վում է այդ նոր հավատից, կառչում նը-
րան իր հոգու ամբողջ զորութեամբ և հա-
նուն այդ հավատի հանձն առնում ան-
լուր զոհողութիւններ իր հետագա ամբողջ
պատմութեան ընթացքում: Այդ ժամանա-
կից սկսած հայ քրիստոնեայն անունն ան-
խղի լեկրով շարժւապիւմ են իրար
հետ:

Ազատասիրական ոգով կրթված մի
ժողովրդի համար, մանավանդ նրա հո-
գևորականների համար, ի՞նչ մեծ բան էր
Պարսկաստանից ստացված գրութեանը պա-
տասխանել: Հայի մտածողութիւնն այն-
քան յարձրացել էր, վերացական գաղա-
փարներն այնքան մտաչելի դարձել, որ
նրա համար ծիծաղելի էր թիւում, ուղղա-

կի երեսնայական, արեգակին կամ կրակին երկրպագելը, որոնք աներևույթ աստծու կողմից ստեղծված են մարդուն սպասարկելու համար: Քաղաքական անկախութունը քրիստոնեական կրոնի սկզբունքներն այնքան թանկ էին մեր նախնիքների համար, որ նրանք հանձն էին առնում ամեն տեսակ զոհողութուններ կրել հանուն նրանց, իրենց համար պատիվ համարելով այդ:

Պատասխան նամակի վերջում, նամակ, որը մի շատագովութուն է քրիստոնեական կրոնի հասցեին և հերքում դադաշտական ուսմունքի հիմքերի, մեր նախնիքն ավելացնում են. «Յայտ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ հրեշտակք եւ ոչ մարդիկ, ոչ սուր եւ ոչ հուր, ոչ ջուր, ոչ ամենայն զինչ եւ են դառն հարուածք... Եթէ սովին հաւատովք թողուա ոչ յերկրի, այլ տէր փոխանակեմք ընդ քեզ, եւ ոչ յերկինս, այլ Աստուած փոխանակեմք ընդ Յիսուսի Քրիստոսի... զի ոչ եթէ ընդ մարդոյ է ուխտ հաւատոց մերոց... այլ անլուծութեամբ ընդ Աստուծոյ, որում չիք հնար քակտել եւ ի բաց ելանել, ոչ այժմ եւ ոչ յապա, եւ ոչ յաւիտեանս, եւ ոչ յաւիտենից յաւիտեանս»: Շատ ուշադրով է այստեղ մեր նախնիքների խնդրած Տաճկաստ ցանկութունը, որոնք խիզախութեամբ մերժում են պարսից թագավորի պահանջը: Իայց բնության տարրերին երկրպագող կարծրասիրտ թագավորի համար խորթ էին այս նամակի հեղինակների մտքերն ու զգացմունքները: Հազիկերտը զայրանում է հայերի դրած համարձակ պատասխանի վրա և շտապ կարգով կարգադրում Հայաստանից կանչել մի շարք ահանավոր նախարարների՝ Սպարապետ Վարդան Մամիկոնյանի գլխավորութեամբ:

Գալով Պարսկաստան, նախարարները համոզվում են, որ բունակալ Հազիկերտի համար կարծես կենաց ու մահվան խնդիր է դարձել Հայաստանը կրակապաշտ տեսնել, և երեսանց հավանութուն տալով նրա

ցանկությանը, Հայաստան են, վերադառնում այն վճռական դիտակցութեամբ, թե դառնության բաժակն արդեն լցվել է, հայ ժողովրդի համբերութունը դադաթնակտին է հասել և պետք է ապստամբության դրոշակը պարզել, շտապով պատրաստութուն տեսնել ժողովրդին ոտքի հանելու բիրտ ուժի դեմ զենքի ուժով կռվելու համար: Նախարարներն արդեն չեն լինում, որ Պարսկաստանից իրենց հետ Հայաստան գան զբաղաշտական կրոնի բազմաթիվ պաշտոնյաներ, մոզեր մոզպետի գլխավորութեամբ, քաջ գլխունալով, թե ի՞նչ դիմադրության կհանդիպեն նրանք իրենց կրոնի ուսմունքը տարածելու առաջին իսկ պահին: Եվ իրոք, մոզերը մոզպետի ղեկավարութեամբ առաջին փորձն են կատարում՝ Անգղ գյուղաքաղաքի եկեղեցին այվերել: մի սարսափելի աղմուկ աղաղակ է բարձրացնում ժողովուրդը և տեղական երեց Ղևոնդի առաջնորդութեամբ գյուղական ամեն տեսակի զործիքներով հարձակվում նրանց վրա, շատերի գլուխները ջարդում, վիրավորում: Ինքը մոզպետը հազիվ է մահվան վտանգից ազատվում: մնացածներին ժողովուրդը ցրում, հալածում է: Ահաբեկված մոզպետը, տեսնելով ժողովրդի այս ուժեղ դիմադրութունը, բացականչում է. «Զի եթէ եւ ինքեանք աստուածքն եկեցեցն յօգնութիւն, չէ հնար օրինացս մոզութեան ի Հայս առնուլ զհաստատութիւն: Մարդք, որ ոչ ի կապանաց դանգիտեն, եւ ոչ ի տանջանաց երկնչին, եւ ոչ ի ստացուածոց պատկառին... զմահ քան զկեանս ընտրեն, ո՞վ է, որ կարէ նոցա դիմակաց լինել... Եւ եթէ անդէն մարդիկ այդպէս բռնացան, եթէ յանկարծ զինուորս եւս ընդ ինքեանս միաբանեցուցանեն, ո՞ կարիցէ կալ առաջի դոցս յանդուզն յարձակմանդ»:

Հայերի տարերային ապստամբության սկիզբը դրվեց. վիճակը զգված էր, էլ ուրիշ հնար չկար, պետք էր աշխատել նախ դրսից օգնութուն ստանալ գալիք պատերազմը շահելու համար: Եվ առաջին հեր-



ՔԱԶՆ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

«Նդիշեայ հոգեակն է քաղցրագրուցիկ,
Որ զվարդանն ի վարդ տեսնու կարմրիկ»:

Հ. Գ. Ա՛ ի օ ա ն

թին ո՞ւմ պիտի դիմեր զբխտոնյա Հայաստանը, եթե ոչ զբխտոնյա Արևմուտքին: Բյուզանդիայի կայսրին դրած նամակի մեջ Հայերը հայտնում են, որ իրենք ստիպված են զինքը ձեռին պաշտպանել զբխտոնեութունը, եզրը եւ այժմ կամին ի մէջ կորզել հանել խաւարասէր որդիքն արեւելից՝ արդեն որոշ հաջողութունների հասել են, բայց գործի մեծ մասը դեռ մնում է առաջիկայում կատարել. «Ընտրեցաք զմահ աստուածաշուտութեամբ, քան զկենսն ուրացութեամբ. եթէ դուք եւս ի ձեռն առիք զմեզ, ահա կրկին կենաց դիպեցաք... Եւ եթէ սակաւիկ մի հեղաշաք, դուցէ բազում եւ այլ աշխարհաց հասանիցէ տապ բոցոյ սորա» (էջ 92): Վերջին խոսքերը շատ մարդարեակաւն էին, թեպետ շատ ուշ կատարվեցան: Բյուզանդիայի արքունիքը խուլ մնաց Հայերի խնդրած օգնութեան հանդեպ և Հայաստանը մենակ մնաց հզոր Մասսանյան պետութեան առաջ:

Արևելքից եկած բոցի տապն առաջին հերթին Հայաստանն էր լարվում, և ոչ միայն Մասսանյան Պարսկաստանի ժամանակ, այլև հետո եկող բռնակալների արշավանքների շրջանում. Հայաստանը զբխտոնյա աշխարհի ամենաարևելյան սահմանային երկիրն էր. զբխտոնեութունը Հայաստանից դեպի արևելք այլևս չտարածվեց և այդպես էլ մնաց մինչև մեր օրերը: Հայաստանը մեծամեծ ճիգեր էր թափում կանգնեցնելու այդ տապի բոցի տարածումը, միշտ հուսալով զբխտոնյա արևմուտքից օգնութուն ստանալ իբրև հավատակից ժողովուրդ, բայց այդ օգնութունը չեկավ ու չեկավ ոչ միայն Ե-րդ դարում, այլև հետագա դարերում:

Բյուզանդիայի բացասական պատասխանից Հայերը չհուսահատվեցին. մի սրբազան ոգևորութուն իջավ նրանց վրա: Եթե նախորդ 4-րդ դարում Հայաստանը ստիպված բազմաթիվ պատերազմներ էր մղում Մասսանյան Պարսկաստանի դեմ բնիկ Արշակունի թագավորների առաջնորդու-

թյամբ, ապա ներկայումս մղվելիք պատերազմն առաջին պատերազմն էր, որ մղելու էր Հայաստանն առանց թագավորի, միայն նախարարների ղեկավարութեամբ, Սպարապետ Վարդան Մամիկոնյանի ղեկավարութեամբ: Այս հանգամանքը է՛լ ավելի էր ուժգնութուն տալիս գործին. ամբողջ ժողովուրդը զլիսովին ոտքի էր կանգնում մարդաստուգ բռնալուրի դեմ. շարժումը համազգային կերպարանք էր ընդունում:

Ժամանակը կարճ էր. պետք էր պատրաստութուն տեսնել գալիք պատերազմի համար: Երկրի սահմաններն ամբացնելու նպատակով Վարդան Սպարապետը պահպան դններ է կարգում. ներսումն էլ կարգ ու կանոն պահպանելու համար մի շարք մեջոցներ ձեռք առնում: Եվ այսպես սպահովելով երկրի պաշտպանութունը, ինքն իր գնդի հետ անցնում է Արվանք աշխտեղից հարվածելու պարսիկներին: Հայերի սակավաթիվ գունդը հրաշքներ է գործում այստեղ. պարսիկներին ամեն տեղից հանում է և դուրս ջրում երկրի սահմաններից: Առաջիկա պատերազմի այս նախերգանքը շատ ավելի լավ հետևանքներ կունենար ընդհանուր գործի նլքի համար, եթե Հայաստանից գուժկան չհասնեիր ու չհայտնեիր, թե որտեղ թվով նախարարներ Վասակ մարզպանի ղեկավարութեամբ հետ են կանգնել ընդհանուր գործից, ուրացողներ են դարձել ու անցել պարսից կողմը:

Վարդանն իր գնդով իսկույն վերադառնում է Հայաստան, մտնում Արտաշատ և ուխտապահ նախարարներին պատվեր տալիս դարունը բացվելուն պես իրենց գորքերով կաղմ ու պատրաստ ներկայանալ:

Գարունը դալիս է. հավատարիմ ուխտապահ նախարարները հավաքվում են միասին իրենց գորքերով, որոնց թիվը հասնում էր 86 հազարի: Վարդան Սպարապետի հրամանադրութեամբ հայոց գորքը դիմում է պարսից սահմանը և Արտազ դավառի Ավարայրի դաշտում բանակ դնում: Նույն տեղն են դալիս հակառակ կողմից

պարսիկները. Տղմուտ զեար բաժանում էր երկու կողմերին: Գիշերը Սպարապետը ամբողջ հայ բանակի առաջ մի ոգևորիչ ճառ է ասում, հորդոր կարգալով քաջությամբ կռվել հայրենատուր օրենքի, քրիստոնեական կրոնի համար, Հերոսարար մեռնել անմահ անուն ժառանգելու համար, չվախենալ հեթանոսների բազմությունից, որովհետև արդար դործի համար է, որ «մենք արյուն ենք թափելու. Աստված ինքը մեր կողմն է, մեզ պահպան»: Նույնպիսի մի ոգևորիչ ճառ է արտասանում Ղևոնդ երկը հոգևորականների կողմից, որոնք եկել էին անձամբ խրախույս լինելու հայ դորքին հավատի համար մղվելիք կռվում:

Մյուս օրն առաջօրյան, 451 թ. հունիսի 2-ին, ճակատամարտն սկսվում է. հայերն անցնում են զեար և կառաղությամբ կռվում հակառակորդի դեմ. չնայելով, որ պարսիկները բազմաթիվ փղեր ունեին, որոնք նրանց համար ուժեղ հենարան էին, այնուամենայնիվ հայոց զորքը մեծ հարվածներ է հասցնում նրանց: Օրը տարածամում էր: Վարդանն ինքը բազմաթիվ քաջություններ է գործում և հենց կռվի դաշտում նահատակվում է, նրա հետ միասին և մի քանի նշանավոր նախարարներ: Հայերի ընդհանուր կորուստը 1036 հոգի էր, իսկ պարսիկներինը 3544: Ըստ Եղիշեի «ոչ եթէ կողմ էր, որ յաղթեաց, եւ կողմ էր, որ պարտեցաւ, այլ... երկողքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան»: Եթե այդ մեկ օրվա համար Եղիշեի գնահատականը ճիշտ է, ապա նույնը չի կարելի ասել այդ օրով սկսվող հետագա մեծ ու փոքր կռիւների համար, որ հայերը շարունակեցին մղել Ավարայրի ճակատամարտից հետո Հայաստանի անմատույց վայրերում, ամուր բերդերում, քարանձաղներում և այլն: Այս բոլոր կռիւներից հայ ժողովուրդը հաղթող դուրս եկավ, որովհետև հասավ իր նպատակին, իր պահանջները կատարվեցան՝ հայ ժողովուրդը պահպանեց իր քաղաքա-

կան անկախությունը, միայն վասալական որոշ կախվածության մեջ ընկած վիճակում, քրիստոնեության դեմ հալածանքը դադարեց, եկեղեցին, վանականներն առաջվա պես ազատ հայտարարվեցին, հարկերը թեթևացան, ամբարտալան զոռոզ թաղապետն իջավ իր «բարձունքներից», խոստովանեց իր տկարությունը և հաշտվեց այն մտքի հետ, որ հայերն երբեք ձեռք չեն քաշի քաղաքական անկախությունից, ինչպես և իրենց հավատից, իրենց դավանանքից ու երբեք էլ կրակապաշտ չեն դառնա:

Այս տեսակետից նայելով Ավարայրի ճակատամարտը մեզ հաղթություն բերեց, Վարդանանց ու Ղևոնդյանց նահատակությունը մեզ կենդանություն պարգևեց, նրանց թափած արյունը կյանքի աղբյուր հանդիսացավ հետագա սերունդների համար. Վարդանանք, Ղևոնդյանք հերոսներ դառան մեր ժողովրդի համար, նրանք անմահ են և ապրում են մեր սրտերում: Եվ ամեն անգամ, երբ հայ ժողովուրդն օրհասական վիճակի մեջ էր ընկնում, նա աչքը դարձնում էր դեպի իր փառավոր անցյալը, դեպի իր հերոսները, դեպի նրանց պայծառ, լուսավոր դեմքերը, դեպի Վարդանն ու իր գինախիցները, դեպի Ղևոնդն ու իր ընկերակիցները և սրանց նմանողությամբ դեպի նրանցից հետո եկող հերոսները, որոնցով այնպես լի է մեր անցյալի հարուստ պատմությունը, և այնտեղից հոգի, շունչ, ոգևորություն, եռանդ ստանում դժնդակ պայմանների դեմ պայքարելու և այսպիսով նրանց արժանավոր ժառանգը լինելու:

Իսկ ի՞նչ հիշատակ թողեց ուրացող կողմը, ուրացողների ղեկավար Վասակ մարզպանը: Ահա այդ մասին Եղիշեի գնահատականը. «Եւ այն, որ կամէրն թաղաւոր լինել մատնութեամբ Հայոց աշխարհին, եւ ոչ դերեզմանի նորա տեղի երեւեցաւ ի նմին, քանզի իբրեւ զշուն մեռաւ եւ իբրեւ զգէշ քարչեցաւ»:

Վարդանանց ազատասիրական բարձր

ղգացմունքներն էլ ավելի վառ կերպով բորբոքվեց հայ ժողովրդի սրտում հետագա դարերում: Իբրև փառավոր ապացույց նրա կենսունակութան, բերենք այն նշանավոր փաստը, որ երբ 7-րդ դարում Արարիայի շեկ ահապատեց հայտնվեց մի նոր աշխարհակալ, որն արյունով, հրով ու սրով էր իր համար ճանապարհ բաց անում, հզոր կրահապաշտ Պարսկաստանը չդիմացավ նրա հարվածներին և կորցրեց ոչ միայն իր քաղաքական անկախութունը, այլև ստիպված եղավ ձեռք քաշել իր սլապնակաճ զբաղաշտական կրոնից և ընդունել իսլամը, այն ինչ անթաղավոր, անդուլտ, թույլ, բայց քաղաքական զգացմունքներով հոգեպես ուժեղ Հայաստանը դիմադրութուն ցույց տվեց նրան և նույնիսկ մի շարք ճակատամարտերում հաղթեց նրան: Այդ կրոնի ներկայացուցիչ արարները շատ ուշ տեր դառան Հայաստանին, շատ անթուլթյուններ դործեցին մեր երկրում, բայց քրիստոնյա Հայաստանը միշտ էլ քրիստոնյա մնաց: Թեպետ նրանց տիրապետութան 250-ամյա շրջանում ամեն դասակարգից ազատազրական պայքարի շատ նահատակներ, վկաներ ունեցանք, բայց ժողովրդի ներքին ոգին այնքան բարձր էր, որ միշտ հարմար առիթի էր սպասում իր կորցրած քաղաքական անկախությունը վերականգնելու: Վարդանանց ոգին միշտ սավառնում էր նրա վրա: Հետևանքը եղավ Բագրատունյաց թագավորութան հաստատումն ու ծաղկումը 150 տարվա ընթացքում: Թեպետ Բագրատունյաց անկումից հետո բուն Հայաստանը վերջնականապես ընկավ օտար կեղեքեղնների ձեռքը, բայց կրոնն ու հոգևոր կուլտուրան անսասան մնացին այնտեղ և շարունակեցին նույնիսկ ծաղկել: Նույն Վարդանանց ոգին էր, որ ըմբոստ տարբերին ապաստարան տվեց Տավրոսի բարձունքներում, Կիլիկիայում, որտեղ հայ թագավորությունը 300 տարի գոյութուն

ունեցավ, միշտ շրջապատված լինելով արարյացակամ հարևաններով: Կիլիկիայի անկախութան անկումից հետո ստեղծվեց, զարհուրելի ժամանակներ եկան մեր ժողովրդի համար, բայց նրա տուժուն ոգին ամեն նեղութուն հաղթահարում էր, ապրելով լուսավոր ապագային հասնելու մշտական հույսով: 1441 թ. կաթողիկոսական աթոռը Կիլիկիայից՝ Սսից նորեց փոխադրվում է Ս. էջմիածին, որի շնորհիվ աղագային հոգևոր կյանքը վերստին սկսում է ծաղկել մեր բնիկ երկրում, և եթե պատմական դժնդակ հանդամանքները հետագա շրջանում նորեց սկսում են հայ ժողովրդին նեղել, նրա մաքուր զգացմունքները վերափոխել, ապա Վարդանանց ոգին կյանքի է կոչում, ոտքի հանում Դավիթ Բեկի նման անձանց, որոնք պաշտպան են կանգնում իրենց ժողովրդի դարավոր իրավունքներին: Նույն Վարդանանց ոգին չէ՞ միթե, որ ողևշնչում է մեր մարտիկներին հայրենական այս մեծ պատերազմում, որ մղում են միասին մեր մեծ Միության եղբայրակից ժողովուրդները մեր ժամանակի Հաղկերտ, մարդախոշոչ, արյունածարավ Հիտլերի դեմ: Անցյալի պատմության դասերը զուր չին անցել մեր ժողովրդի համար. նա տեսնում է, որ այսօր սպառնալիքի տակ են դրվում իր լավագույն հույզերն ու զգացմունքները, իր դարավոր կուլտուրական նվաճումները, իր քաղաքական անկախությունը, որին տենչալով տենչացել է և վերջապես հասել, բայց արևմուտքից եկող խավարասեր, ստրկածարավ Հիտլերը կամենում է այս բոլորը կորզել մեզանից: Եթե 5-րդ դարում փոքրիկ Հայաստանը մենմենակ, առանց դրոսի օգնության, կարողացավ հաղթել հզոր Պարսկաստանին, ի՞նչ կասկած, որ մեր մեծ Միության բոլոր ժողովուրդները միացած, զբանջ մեջ և հայ ժողովուրդը, վերջնականապես կհաղթեն այսօրվա նեղ թշնամուն: Պատերազմի ավելի քան երկու և կես տարվա ընթացքում մեր ժողովրդի ծոցից շատ հերոսներ են գուր

եկել, որոնք իրենց սխրագործութիւններով
հիշեցնում են մեր քաջարի նախնիքներին.
նրանցից շատերն են զոհվել հայրենիքի հա-
մար, առաջնորդվելով այն սկզբունքով, թե
«մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝
անմահութիւն է»:

Եվ քանի վառ է մեր մեջ վարդանանց
հերոսութիւնը, նրանց նահատակութիւնը,
քանի նա իրրև փարոս է ծառայում մեր
պատմական ուղու համար, հայ ժողովուր-
դը երբեք ոչ մի զժպարութեան առաջ չի
ընկճվի:

ՀՈՎՍԵՓ ԳՐԻԳՈՐԹԱՆ

